33. ՄԵՌՈՒԿ ՄԱՆՈՒԿ

Մեկ մարդ՝ մեկ կնիկ՝ էդոնց մեկ խատ աղջիկ կէղի, կուտան իրենց ղրկեցի տուն աշկերտ: Ամիսմ, էրկու-իրեք էդ տուն աշկերտութեն կէնա: էդոր ուստեն կը վերու. - Աղջի՛, փարչ առ, տար ջուր բեր:

Ամիսմ-էրկու-իրեք էդ աղջիկ ուստին ամեն օր ջուր կը բերա:

Մեկ օր էլ մեկ սիվտակ մուրուս խալիվոր էդ աղբրեն դուս կէլլե, էդ աղջկեն կասա. - Աղջի՛, մեռնիս՝ խոդ էնես. ապրիս՝ մեռուկ մանուկ էնես:

Աղջիկ կուգյա տուն:

Մեկ՝ տաս՝ քսան օր աղջիկ կէրթա ջրու, էդ խալիվոր էդլա «Աղջինկ, մեռիս՝ խող էնես, ապրես՝ մեռուկ մանուկ էնես», - կասա:

էդ աղջիկ հօրպըզօր կը խալի, էդոր միս կը բարկնա: Մեկ օր էդ աղջիկ կէլի կէրթա ուր խոր տուն, խեր, մեր կը վերցին. - Աղջի՛, դու խիվընդցեր ես, քե դեղ ին տված, ի՞նչ ա տված, դու էդլան ես էղեր ես:

- Չի նա դեղ ա տված, նա խիվընդցեր եմ, իմ ուստեն ընձի ճամխեց աղբուր ջրի, մեկ խալիվոր մարդ աղբրե դուս էկավ, ընձի ասաց. «Աղջի՛, մեռիս՝ խող էնես, ապրես՝ մեռուկ մանուկ էնես, օրմ՝ էլ Մանուկին պտի ըռաստ գաս»:

Մեր կը վերցու. - Մա՛րդ, աղջիկ վախեցեր ա, ա՛ռ, գնա՛ մեկ ղարիբ էրկիր:

Խերն էր, վերուց զաղջիկ. օրմ էրկու օր, մեկ ամիս, էրկու ամիս, գնաց, խասավ մեկ քաղքի: Խերն էր, վերուց. - Աղջի՛, դու դադ կայնե, չուր ես էրթամ օտաց ճանբախ, գյամ:

էդ աղջիկ դադի կայնավ, խեր գնաց պետենի տակ օտաց ճամբախ:

էդ մարդ դարձավ օ պետեն բացվեր. աղջիկ գյացե ինե: Կը տեսի օ աղջիկ չկա, կէլի, վի՛ն օ կը խարցուցա, դես-դեն, սայխ չեն իդա, էդ մարդ ուրին-ուրին կասա. «Կա, չկա՝ Մեռուկ Մանուկ իմ աղջիկ տարավ»: Կէլի քոր-փոշման կուգյա տուն:

էդ աղջիկ ա, կէրթա յոթ դուռ կը բանա, կը տեսի կո մարդմ մեռուկ՝ էդա տեղ դրուկ ա. «Կա, չկա՝ Մեռուկ Մանուկ էս ա. կո էկա էդոր խասա»:

Աղջիկն ա, էդ մեռուկի գլոխ կը դնա վըր չոքին՝ տարիմ, էրկուս-իրեք-չորս կը պախա: էդ աղջիկն ա, փանճարից կիշկա մըրթըպու քոչ կուգյա. կը տեսի օ մեկ եթըմ մըրթըպու կեչկե էդ մըրթըպու քոչին, կասա. - Ընձի էլ տարեք, անտեր եմ, անտիրական եմ:

էդոնք թողին գյացին:

Որ կեչեն շատ լացեց, վերևուց աղջիկ ասաց. - Կեչե՛, էս միգրի պաղ բռնա, արի ես քե կը պախեմ:

Կեչեն ա, բռնեց միգրի պաղ, աղջիկ քաշեց, խանեց ուր մոտ: էդ կեչեն իրեք տարի էդ աղջըկե մոտ խգմեթ էնեց:

Աղջիկ տեսավ օր յոթ տարին թմավ, Մեռուկ Մանուկ հարութեն պտի առի, կեչկին ասաց. - Մանուկի գլոխ դիր վըր քու չոքին, ես էրթամ գլոխ լվամ, սերսըփիմ հիգամ. որ Մանուկ մե խատ ժաժ կուգա, ընձի իմաց մի տու, որ մեկ էլ ժաժ կուգա, ընձի իմաց տուր, որ ես գյամ. Մանուկ հարութեն առնի, մենք խասինք մեր մուրազին:

Աղջիկն ա, գնաց ուր գլոխ լվա, էդ կեչեն էր, Մանուկի գլոխ դնեց վըր չոքին, նստավ:

Մեռուկ Մանուկ էրկու խետ ժաժ կուգյա, կեչեն աղջկեն չիմցուցա: Մեռուկ Մանուկ կէլի հարութեն, խըտ կեչին կառի:

Մանուկն ա, գինա թե կեչկեն խայ ա:

էն աղջիկն օր պախեց, շախեց, էղավ ճարիյա:

Մեռուկ Մանուկ ամեն օր կեչկին կասա. - էդ ճարին խաց տու, ջուր տու, մեղք ա:

Մանուկն ա, կէլի մեկ օր, էրկու օր, մեկ շաբաթ կը պըտրտա, էլման տուն կուգյա, կեչեն ա կը վերու. - Գնա, ընձի զաղ-զաղ մանուսա առ արի՛, էնիմ շոր:

Մանուկ կը վերու. - էդի քըրդու շոր ա, խայի շոր ուզա, բերեմ:

- էն շոր որ կուզեմ, էն շոր բեր:

- Քո քեյֆն ա, - կասա, - էն շորից կը բերեմ. գնա՛ իշկա, քու ճարիյան ինչ կուզա:

Կեչեն գնաց, խարցուց. - Աղջի՛, Մանուկ կէրթա տուքներ, քզի ի՞նչ շոր կուզես:

- Ընձի բան չբերա. մեկ սապրի խրձիկ, մեկ էլ բըղըղիկ, ֆինճանմ էլ աղու:

Մանուկն էր, գնաց պազար, կեչկի շորեր առավ, էկավ չանք ճամբխու կես, միտք ընկյավ, մեկել դարձավ, գնաց մեկ սապրի խրձիկ, մեկ բըղըղիկ, մեկ ֆինճանմ էլ աղու առավ, էկավ:

Մանուկ ասաց. - էդ բաներ ուզող շատ դարտի տեր ա, մուղաթ կաց, էնի կը պատռի:

Էկավ տուն, աղջկեն ու կեչկի շորեր տվեց:

Աղջիկը բըղըղիկն ու սապրի խրձիկ կը դնա ուր հառեճ, կասա ուր գլխու գալաճ, դառնա, խարցու. - Բըղըղիկ, սապրի խրձիկ, ե՛ս պատռիմ, չէ դու: էս յոթ տարի Մանուկին շախի-պախի, կեչեն էկավ, իմ ձեռնեն առավ:

Բըղըղիկ, սապրի խրձիկ կասեն. - Մենք կը պատռենք, դո՛ւ մը պատռի:

Մեկել էդ աղջիկ ուր գլխու գալաճներ էդ բըղըղիկին, սապրի խրձի-կին կասա. դառնա, կասա. - Բըղըղի՛նկ, սապրի խրձի՛նկ, ե՛ս պատռիմ չէ դո՛ւ: էս յոթ տարի ես Մանուկին շախի-պախի. կեչեն էկավ, իմ ձեռնեն առավ:

Էլման բըղըղիկ, սապրի խրձիկ կասա. - Ես կը պատռիմ, դու մը՛ պատռի:

Աղջիկ կը վերու. - Բըղըղի՛նկ, սապրի խրձի՛նկ, ես պատռիմ, դու մը պատռի. ես յոթ տարի Մանուկին շախի-պախի, կեչեն էկավ, իմ ձեռնեն առավ:

Մանուկ էդ տեղեն կը լսա, կասա. - Դու մը՛ պատռի, դու մը՛ պատռի, թը բըղըղիկ, սապրի խրձիկ պատռին, դու մը՛ պատռի:

Մանուկ ասելու պաշտան, բըղըղիկ, սապրի խրձիկ պատռան հիրարուց:

Մանուկ էդ տեղ կիմնա, օր էդ աղջիկ ուրին պախեր էր չանք յոթ տարի, օր էս խըտ էդոր հարութեն պտի առնենք: